

Արձանագրություն թիվ 1

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2020թ սեպտեմբերի 14-ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2020-21 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում:

2. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին :

3. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Տ. Վ. Ղուչիկյան.

- Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս.տարվա աշխատանքային պլանի նախագիծը բաժանված էր ամբիոնի վարիչներին, մանրամասն ծանոթանալու և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելու համար: Ֆիզ-կոլ. Քիմիայի ամբիոնից ներկայացվել է մի քանի փոփոխություններ, որոնք արդենիսկ կատարվել են և մեկ հարց, որը վերաբերվում էր ասպրանտների և հայցորդների ատեստավորմանը:

-Ատեստավորման համար կոնկրետ նշված չէ, քանզի մեր հայցորդների և ասպիրանտների ընդունելության ժամանակահատվածները չեն համընկնում: Ատեստավորումները կիրականացնենք համապատասխան գիտխորհրդի նիստում: Գիտխորհրդի անդամները՝ աշխատանքային պլանի վերաբերյալ առաջարկների և քննարկումների համար կարող են մոտենալ և տեղում ներկայացնել: Ժամանակահատվածը մինչև սեպտեմբերի 25-ն է:

- Գիտխորհրդի նախագահ Տ.Վ.Ղուչիկյան – Այսօր նաև թերի է գիտխորհրդի կազմը: Փոփոխություններ պետք է կատարել՝ պրոֆեսորադասախոսական կազմից՝ պրն-Փիրումյանի փոխարեն և ուսանողների կազմից՝ ՈւԽ-ն պենք է ներկայացնի 2 ուսանողի թեկնածություն:

2. Պրոֆեսոր-Տ.Վ.Ղուչիկյան

Օրակարգի երկրորդ հարցը վերաբերվում է ամբիոններում լաբորատորիաների պատրաստվածությանը: Ամբիոնի վարիչները ներկայացնեն խնդիրները, եթե այսպիսիք կան

Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ- Ա.Բ.Մարտիրյան: Մեր ամբիոնը պատրաստ է ուսումնական պրոցեսին և խնդիրներ չունենք:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ- Ն.Ա.Դուրգարյան: Հիմնականում պատրաստ ենք, ապահովված ենք լուծիչներով և ռեակտիվներով: Միակ խնդիրը դա պոլիվինիլացետատի բացակայությունն է, որը անհրաժեշտ է ԲՄՄ քիմիա առարկայի լաբորատոր աշխատանքների համար: Հայաստանում չկա, մնում է պատվիրել դրսից, որը կկատարավի մոտ ժամանակներում:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ- Շ.Ա.Մարգարյան: Մեր խնդիրը վերաբերվում է լաբորատորիանեում ուսանողական սեղանների պակասին: Զեկուցագիրը գրված է, մակագրված է սպասում ենք հետագա գործընթացին:

Տ.Վ.Ղոչիկյան – Ըստ էության ֆակուլտետը պատրաստ է լաբորատոր աշխատանքների իրականացմանը: Զեր բարձրացրած հարցերը տեխնիկական բնույթ ունեն և պետք է սպասել:

3. Ընթացիկ հարցեր- այս բաժնում պետք է հաստատել թեմատիկ աշխատանքերի ամփոփիչ հաշվետվություններ: Ֆիզ-կոլ.քիմիայի ամբիոնում ավարտվել են Ղազոյան Հ. «Հավելանյութերի առկայությամբ ԴՆԹ-ի լուծույթների ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունը » 18T-1D012 ծածկագրով գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի և Գաբրիելյան Լ. «Մարտկոցներում կիրառվող կարևոր սուլֆոնների՝ էթիլմեթիլ-, տետրամեթիլեն-դիֆենիլ- և դիբուրիլսուլֆոնների քվանտաքիմիական և փորձարարական ուսումնասիրությունները » 18T-1D086 ծածկագրով գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի աշխատանքները: Ամբիոնում քննարկվել է ամփոփիչ հաշվետվությունները և ներկայացվել է քաղվածք դրանց վերաբերյալ:

«Հավելանյութերի առկայությամբ ԴՆԹ-ի լուծույթների ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունը » 18T-1D012 ծածկագրով գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմայի իրականացման ամփոփիչ հաշվետվության մասին

Հաշվետու ժամանակահատվածում թեմայի գիտական հետազոտությունների շրջանակներում իրականացվել է ԴՆԹ-ի լուծույթների ուսումնասիրությունը հավելանյութերի (էթիլդիումի բրոմիդի, 2-ամինոպիրիդինի, ակրիդինային նարնջագույնի մեթիլենային կապույտի, վիտամինների և որոշ մակերևութային ակտիվ նյութերի)

առկայությամբ: Քննարկվել է ԴՆԹ-ի դենատուրացիայի վրա խառը լուծիչների ազդեցությունը՝ պայմանավորված լուծույթներում միջմոլեկուլային փոխազդեցություններով: Աշխատանքների իրագործման համար կիրառվել են խտաչափության, մածուցիկաչափության, մակերևութային լարվածության, ինչպես նաև սպեկտրաչափական՝ էլեկտրոնային կլանման, ֆլուորեսցենցիայի, ընդգրկելով նաև ֆլուորեսցենցիայի անիզոտրոպիայի, և ինֆրակարմիր սպեկտոսկոպիայի մեթոդները: Ուսումնասիրվել է դեղորայքային պրեպարատներ հանդիսացող նյութերի լուծույթները ԴՆԹ-ի առկայությամբ:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հրատարակվել է 5 գիտական հոդված, բանավոր և ստենդային 3 թեզիս:

Խորհուրդը

ՈՐՈՇԵՑ – ընդունել թեմայի ամփոփիչ հաշվետվությունը

Հաշվետու ժամանակահատվածում թեմայի գիտական հետազոտությունների շրջանակներում իրականացվել է սուլֆուլանի լուծույթների ուսումնասիրություն՝ դիէլեկտրիկ ռելաքսացիայի սպեկտրոսկոպիայի մեթոդով լայն ջերմաստիճանային տիրույթում, Ֆուրյե ձևափոխմամբ ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի մեթոդով իրականացվել է էթիլմեթիլ- և դիբութիլսուլֆոնի ջրային լուծույթների ԻԿ սպեկտրների վերլուծություն: Իրականացվել է դիբութիլսուլֆոնի ջրային լուծույթների մակերևութային և ծավալային հատկությունների ուսումնասիրություն, ինչպես նաև Gaussian-09 քվանտաքիմիական փաթեթի օգնությամբ էթիլմեթիլ- և դիբութիլսուլֆոն մոլեկուլների պոտենցիալ էներգիայի մակերևութի հաշվարկ:

Ստացված արդյունքների հիման վրա թեմայի աշխատակից Ա.Մխիթարյանը 2019թ-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: 2020թ-ին Վ.Մանուչարյանը պաշտպանել է մագիստրոսական թեզը: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հրատարակվել է 2 գիտական հոդված, 3 թեզիս՝ միջազգային գիտաժողովներում:

Խորհուրդը

ՈՐՈՇԵՑ – ընդունել թեմայի ամփոփիչ հաշվետվությունը

Ընթացիկ հարցերի մեջ քննարկվեց նաև անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը գիտխորհուրդը միաձայն որոշեց

Որոշեցին - ա/ Նշանակել «Քիմիա» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանող Տիգրան Մեհերի Այվազյանին՝ Մտեփան Ղամբարյանի՝ անվան կրթաթոշակը:

ք/ Շարունակել «Սննդի անվտանգություն» բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Գոհար Ռոբերտի Առաքելյանի “Աիդա Ավետիսյանի” անվան կրթաթոշակը:

Խորհրդի նախագահ

քիմ. գիտ. դոկտոր., պրոֆեսոր

Տ.Վ. Ղոչիկյան

Խորհրդի գիտ. քարտուղար

քիմ. գիտ. թեկնածու դոցենտ

Մ.Ա. Սամվելյան